# ՀՈԴՎԱԾՆԵՐ

## ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ

Վ. Հ. ՂԱԶԱՆՋՅԱՆ

*1920 թ. Մայիսյան զինված ապստամբությունը Հայաստանում՝ Անդրկովկասի հեղափոխական շարժման խոշորագույն իրադարձություններից է։ Հայ աշխատավորության ազատագրական պայքարի հերոսական այդ դրվագը լուսավորեց շահագործվող մասսաների հեղափոխության ուղին։*

*Մայիսյան ապստամբությունը ցույց տվեց, որ կոմունիստական կուսակցությունը խորը արմատներ է գցել ժողովրդական լայն մասսաների շրջանում, որ նա միակ կուսակցությունն է, որն ընդունակ է ղեկավարելու և մինչև վերջը հասցնելու դաշնակների ու նրանց օտարերկրյա տերերի դեմ Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը։*

*1920 թ. սկզբներին Հայաստանի աշխատավոր մասսաների լայն խավերը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ավելի կազմակերպված և վճռական պայքարի ելան հանուն խորհրդային իշխանության հաստատման։*

*Հունվարին, Երևանում տեղի ունեցած կոմունիստական կազմակերպությունների առաջին անլեգալ կոնֆերանսը ընտրեց ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) նոր կազմ։ Կոնֆերանսը Հայաստանի կոմունիստական կուսակցության և աշխատավորության առաջնահերթ խնդիրը համարեց դաշնակների ատելի տիրապետության տապալումը և խորհրդային իշխանության հաստատումը։*

*Մայիսմեկյան ցույցերը Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում, Դիլիջանում, Զանգեզուրում տարիների ընթացքում կուտակված հուսախաբության, ղժգոհության և ցասման պոռթկումն էին։ Այդ օրերին Հայաստանի բանվորները, գյուղացիները, զինվորները առաջին զինված փորձը կատարեցին տապալելու դաշնակցական-խմբապետական արգահատելի լուծը։ Տիրապետող դաշնակցական կուսակցությունն աշխատում էր ամեն կերպ խեղդել տարերային շարժումը։ Բոլշևիկներն, ընդհակառակը, ձգտում էին գլխավորել այն և ավելի ցայտուն դարձնել ցույցերի հակադաշնակցական բնույթը։*

*Պատահական չէր, որ պրոլետարիատի համերաշխության տոնը նախապատրաստված անցկացնելու մասին Արմենկոմը, դեռևս ապրիլի 18-ին, հատուկ շրջաբերական էր ուղարկել բոլշևիկյան կազմակերպություններին։ Երևանում ցույցը կազմակերպում ու ղեկավարում էին Արմենկոմը և քաղաքի բոլշևիկյան կոմիտեն։ Ցույցի անցկացման գործում ակտիվ դեր էին կատարում բոլշևիկներ Ստ. Ալավերդյանը, Ս. Մարտիկյանը, Լ. Հովհաննիսյանը։ Մայիսմեկյան տոնի մասնակիցները, կոմունիստների գլխավորությամբ, «Վար-*

շավյանկա» երգով, փողային նվագախմբի ուղեկցությամբ. ալ գրող պարզած շարժվում են դեպի դաշնակցական պառլամենտի շենքը։ Ցուցարարների մայիսմեկյան լոզունգներն էին՝ «Բաքուն դարձավ խորհրդային, հերթը՝ Երևանինն է», «Կեցցե՛ բոլշևիկների կուսակցությունը», «Կեցցե՛ Խորհրդային Ռուսաստանը», «Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը»։

Դաշնակցականների հակաաշխատավորական քաղաքականությունը մերկացնող բոցաշունչ ճառով ցուցարարների առջև հանդես եկավ Արմենկոմի անդամ, աննկուն բոլշևիկ Սա. Ալավերդյանը։ Նա ողջունելով Ադրբեջանի աշխատավորներին, կոչ է անում Հայաստանում ևս խորհրդային իշխանություն հաստատել, ամրապնդել Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը։ Նա իր կրակոտ ելույթն ավարտում է. «Կորչի՛ դաշնակցական կառավարությունը», «Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը» կոչերով։

Դաշնակցական շեֆերը, տոնակատարությանը ցանկալի ուղղություն տալու նպատակով, իրենց ղեկավարների նկարների հետ միասին ցույցի դուրս էին բերել նաև Կ. Մարքսի, Ստ. Շահումյանի պորտրեները և վանկարկում էին՝ «Կեցցե՛ 3-րդ ինտերնացիոնալը», «Կեցցե՛ սոցիալիզմը» լոզունգները։ Բայց այդ երկերեսանությունը չօգնեց նրանց։ Կառավարության ղեկավարները վախենալով ցույցի թափից և բոլշևիկյան լոզունգների ազդեցությունից. ժողովրդին ցրելու համար, դիմում են զինված միջամտության։ Սակայն զինվորները միանում են ցուցարարներին և կատարյալ շփոթություն պատճառում դաշնակցական լիդերներին։

Պրոլետարիատի համերաշխության տոնը հեղափոխական բուռն վերելքի պայմաններում են անցկացնում Ալեքսանդրապոլի դեպոյի և կայարանի բանվորները։ Դեռևս նախորդ օրը քաղաքի ընդհատակյա բոլշևիկյան կոմիտեն ծրագրել էր մայիսմեկյան ելույթը և նախապատրաստել աշխատավոր մասսաներին ուղղված մարտական կոչը։ Դեպոյում կազմակերպվում է միտինգ, որտեղ ճառերով հանդես են գալիս Ա. Նուրիջանյանը, Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը, Ա. Գոգունցը, Ե. Սկյանը և ուրիշներ։ Ցուցարարների լոզունգներն էին՝ «Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը», «Կորչի՛ դաշնակցական կառավարությունը»։ Դրանք փաստորեն զինված ապստամբության և երկրում խորհրդային իշխանության հաստատման լոզունգներ էին և ընդունվում էին մեծ խանդավառությամբ։ Շուտով «Վարդան զորավար» զրահապատ գնացքի անձնակազմը, նրա հրամանատար՝ կապիտան Ս. Մուսայելյանի գլխավորությամբ, Ալեքսանդրապոլի կոմիտեի առաջադրանքով, ապստամբեց, չենթարկվեց դաշնակցական կառավարությանը և չմեկնեց Ղամարլու, ուր նրան ուղարկում էին ծուղակը գցելու նպատակով։ Կայարանի բանվորները և կայազորի զինվորները ցնծությամբ դիմավորեցին մայիսյան ապստամբության կարմիր դրող պարզած զրահապատը։

Զինված ապստամբությունը օրակարգի հարց էր դառնում։

Սակայն այդ կրիտիկական պահին զինված ապստամբության կազմակերպման հարցի շուրջը Արմենկոմի և Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեի միջև տարաձայնություններ ծագեցին։ Զինված ապստամբության պրակտիկ կազմակերպման հարցը քննարկելով, Արմենկոմը որոշում է ապստամբությունը սկսել Ադրբեջանին սահմանակից՝ Ղազախ-Շամշադինից։

Մայիսի 3-ին, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեի անունից, Ա. Նուրիջանյանը նամակ է գրում Արմենկոմ և զինված ապստամբություն բարձրաց-

նելու թույլտվություն պահանջում։ Սակայն, Արմենկոմի նախագծով ապըստամբության ազդանշանը պետք է տրվեր Ղազախից։ Ալեքսանդրապոլցիները չցանկացան հաշվի առնել այդ՝ «ինչո՞ւ Ղազախը և ոչ թե Ալեքպոլը»։

Մայիսի 5-ին Ալեքսանդրապոլի կոմիտեն ևս 3 նամակ է ուղարկում Արմենկոմ և կտրականապես ապստամբության թույլտվություն պահանջում։ Սակայն պատասխանը ձգձգվում է։ Վերջապես, մայիսի 6-ին Արմենկոմի երկու ներկայացուցիչներ՝ Դ. Տեր-Սիմոնյանը և Ա. Մելքոնյանը, լայն լիազորություններով, մեկնում են Ալեքսանդրապոլ՝ տեղում իրադրությանը ծանոթանալու և հեղափոխական շարժմանը ուղղություն տալու նպատակով։

Ստեղծված իրավիճակը վճռական միջոցներ էր պահանջում։ Այդ նպատակով մայիսի 7-ին «Վարդան զորավար» զրահագնացքում հրավիրվում է խորհրդակցություն, որին մասնակցում են Արմենկոմի, ինչպես նաև Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Դիլիջանի գավառների և Քավթառլուի շրջանի կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչներ Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Նուրիջանյանը (Ավիս), Ղ. Ղուկասյանը, Ա. Դոգունցը, Պ. Պետրոսյանը, Գ. Սարդսյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Մելքոնյանը, Լ. Ուլիբեկյանը, Թ. Մանդալյանը, Ա. Տեր-Սահակյանը, Ա. Ճուղուրյանը, Ն. Կուրղինյանը, Կ. Այվազյանը և զրահապատի հրամանատար Ս. Մուսայելյանը։ Խորհրդակցությունը որոշում է ապստամբությունը սկսել մայիսի 10-ին, Ալեքսանդրապոլից։ Ընտրվում է Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտե հետևյալ կազմով՝ Ս. Մուսայելյան, Ա. Նուրիջանյան, Ա. Մելքոնյան, Դ. Տեր-Սիմոնյան, Ա. Դոդունց, Պ. Պետրոսյան, Գ. Սարդսյան, Ա. Տեր-Սահակյան, Լ. Ուլիբեկյան։ Կարմիր զորքերի հրամանատար է նշանակվում Սարդիս Մուսայելյանը։ Ծրագրվում է Ղազախից կապվել Ազստաֆայում գտնվող կարմիր բանակի զորամասերի հետ և սկսել շարժումը, իսկ խորհրդակցության մասնակիցներին առաջարկվում է մեկնել տեղերը և նախապատրաստել զինված ապստամբությունը։

Ռազմա-հեղափոխական կոմիտեի մայիսի 10-ի կոչով դաշնակցական կառավարությունը համարվում է տապալված և երկրում հռչակվում է խորհրդային իշխանություն։

Գլուխները կորցրած, շփոթված դաշնակցական լիդերները սկսում են ուշքի գալ և ավելի են ուժեղացնում հակահեղափոխական իրենց գործունեությունը։ «Հակակառավարական խռովությունը» ապստամբության օրրանում ճնշելու և սպիտակ տեռոր կազմակերպելու համար, արտակարգ լիազորություններով, Ալեքսանդրապոլ են գործուղվում դաշնակցական բյուրո-կառավարության անդամներ Կ. Սասունին, Հ. Բուդաղյանը, Ա. Շահմազյանը։ Նրանք նախ փորձում են բանակցություններով, խորամանկությամբ, կարգավորել գործը, համոզել ապստամբության ղեկավարներին հրաժարվել իրենց ծրագրերից։

Մայիսի 7-ին Ս. Մուսայելյանի հետ հանդիպում է ունենում Կ. Սասունին։ Երկար ժամյա զրույցը արդյունք չի տալիս։ Բոլշևիկ Մուսայելյանը շարադրում է իր համոզմունքները, որոնք նրան մղել են ընտրելու հեղափոխության, զինված ապստամբության ուղին։ Նա նշում է, որ Հայաստանի աշխատավորությունը վճռել է ունենալ իր հարազատ խորհրդային իշխանությունը։ Միայն սոցիալիստական հեղափոխության միջոցով կարելի է իրականացնել երկրի ազատագրությունը, միայն Ռուսաստանի անունը բավական է, որպեսզի թշնամիները հանգիստ թողնեն Հայաստանը։ Հայ ժողովուրդը միայն Ռուսաս-

տանի օգնությամբ կարող է փրկվել սովից։ Դաշնակցությունը հայ ժողովրդին աղետի գիրկն է նետել, պաշտպանում է բուրժուազիային և հարստահարող դասակարգերին։ Ժողովուրդը այլևս չի ցանկանում կռվել, զորքը ցանկանում է հանգստանալ, տուն վերադառնալ։

Մայիսյան այդ մի քանի օրվա ընթացքում իսկական հերոսական գործունեություն ծավալեցին Ալեքսանդրապոլի բոլշևիկների ղեկավարները, հավատարմորեն պաշտպանելով կարմիր իշխանությունը։ Նրանց բոլշևիկյան բոցաշունչ ագիտացիայի շնորհիվ աշխատավոր մասսաները համոզվեցին, որ իրենց միակ փրկությունը խորհրդային իշխանությունն է, որ իրենց երազած ազատությունը բերելու է կարմիր Ռուսաստանը։ Ալեքսանդրապոլի ապստամբության ղեկավարները ժողովրդին դաստիարակում էին տոկունության և անվեհերության ոգով, կոչ էին անում ոչ մի զիջում չանել թշնամուն։ Ժողովրդի մեջ հավատ էին ներշնչում դեպի Լենինը, կարմիր բանակը, դեպի ռուս ժողովուրդը։

ՀՌՀԿ-ն ստեղծում է խորհրդային իշխանության օրգանները և կոմիսարներ նշանակում՝ Ա. Նուրիջանյանին (արտաքին գործերի), Ա. Մելքոնյանին (ներքին գործերի), Դ. Տեր-Սիմոնյանին (մատակարարման), Ա. Գրիգորյանին (գավառային), Բ. Ղարիբջանյանին (ֆինանսների), Ռ. Սաֆարյանին (հողագործության), Գ. Հանեսօղլյանին (տպագրության և կուլտուրայի), Մ. (Արմենակ) Եսայանին (իրավաբանության), Հ. Ամատունուն (միլիցիայի), Գ. Ոսկանյանին (փոստ-հեռագրական)։ Քաղաքի պարետ է նշանակվում Ե. Սևյանը, Հայաստանի հանրապետության ռազմահեղափոխական կոմիտեի կարմիր բանակի շտաբի պետ է հաստատվում Դ. Կորզանովը (Ղորղանյան), կայազորի քաղկոմիսար՝ Ա. Տեր-Սահակյանը, գործող զորքերի հրամանատար՝ Ա. Մելիք-Շահնազարյանը, գործող զորամասերի քաղկոմիսար՝ Ա. Տեր-Մարտիրոսյանը։

Աշխատավոր մասսաները լի էին վճռականությամբ պաշտպանել իրենց նվաճումները, մահու ու կենաց կռիվ մղել, բայց չնահանջել թուրքական ոսոխների և ներքին բռնակալների հանդեպ։

Ալեքսանդրապոլում ծավալված հերոսական իրադարձությունները մեծ արձագանք գտան գավառի գյուղերում, մասնավորապես Քավթառլուի շրջանում, որտեղ եռանդուն գործունեություն ծավալեց կուսակցության հավատարիմ զավակ Ա. Փանյանը։ Մայիսի 1-ից գավառամասում տեղական դաշնակցական իշխանությունն արդեն գոյություն չուներ, իսկ մայիսի 6-ին գյուղում զինվորական դրություն է մտցվում, ամենուրեք շրջում են բոլշևիկյան պարեկները, հրավիրվում է կուսակցական պատասխանատու ընկերների խորհրդակցություն, որտեղ հավանություն է տրվում ապստամբություն բարձրացնելու որոշմանը։ Ընտրվում է երեք հոգուց բաղկացած հեղկոմ (Ա. Փանյան, Ն. Կուրղինյան, Աղասի)։

Մայիսի 8-ին Ռազմահեղափոխական կոմիտե է ընտրվում Ղարսում՝ Ղ. Ղուկասյանի նախագահությամբ, Դ. Մելիքովի, Ա. Նազարյանի, Վ. Ղազանչյանի և մյուսների անդամակցությամբ։ Կոմիտեն իր ձեռքն է վերցնում իշխանությունը, ձերբակալում է ակտիվ դաշնակցականներին, բայց հետո, ՀՌՀԿ-ի կարգադրությամբ, նրանց ազատ է արձակում։

Մայիսի 10-ին Ռազմահեղափոխական կոմիտե է ընտրվում Սարիղամիշում՝ Ա. Ճուղուրյանի նախագահությամբ, որի մեջ մտնում են Լ. Մխչյանը,

Կ. Դարագաշը և ուրիշներ։ Մայիսի 10-ին Սարիղամիշում հռչակվում է խորհրդային իշխանություն, որը տևում է մինչև մայիսի 19-ը։ Այստեղ ևս ձերբակալվում են դաշնակցական կուսակցական և պետական գործիչներ, մաուզերիստներ, զինվորական կասկածելի հրամանատարներ։

Բոլշևիկ Հ. Սարուխանյանը, գործուղվելով Բայազետ, մայիսի 8-ից գլխավորում է ապստամբությունը գավառում։ Նա մայիսի 12-ին կազմակերպում է ռազմահեղափոխական կոմիտե, որի կազմում ընդգրկվում են Ս. Մակարյանը, Պ. Մինասյանը, Ս. Բոստանջյանը և ուրիշներ։

Մայիսի 9-ին Դիլիջանում ևս քննարկվում է զինված ապստամբություն բարձրացնելու հարցը։ Ստեղծվում է ռազմահեղափոխական կոմիտե, որի կազմում ընդգրկվում են Շ. Ամիրխանյանը, Ե. Մկրտումյանը, Ա. Բերբերյանը և ուրիշներ։ Ապստամբության գրոշ պարզելով ռազմահեղափոխական կոմիտեն հույս ուներ եղբայրական Ադրբեջանի և կարմիր բանակի օգնությամբ ամբողջ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատել։ Մայիսի 19-ին ձերբակալվում են դաշնակցական գործիչները Իջևանում և շրջանում հռչակվում է խորհրդային իշխանություն։ Մի քանի օր անց, Դիլիջանի գրավումով, խորհրդային կարգեր են հաստատվում ամբողջ գավառում։

Զանգեզուրի գավառում ապստամբությունը գլխավորում է կուսակցության Զանգեզուրի կենտրոնական կոմիտեն՝ Հ. Կամարու գլխավորությամբ։ Երբ խմբապետներ Դրոյի և Նժդեհի բանդաներին հաջողվեց այստեղ ժամանակավորապես ճնշել ապստամբությունը, ապստամբները, զենքը վայր չդնելով, հեռացան լեռներն ու անտառները և շարունակեցին կռիվը դաշնակցական ոորքերի դեմ։ Ապստամբություն բարձրացնելու փորձեր եղան նաև մի բանի այլ գավառներում ու շրջաններում։

Այսպիսով, Մայիսյան ապստամբությունը դարձավ Հայաստանի աշխատավորության համաժողովրդական զինված ելույթը՝ հանուն խորհրդային իշխանության հաստատման։

Դժբախտաբար Ալեքսանդրապոլի կոմիտեն գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով միայն քաղաքի հեղափոխական ուժերի կազմակերպման վրա, աչքաթող արեց ակտիվ աշխատանքը գյուղում և բանակում։ Այստեղ ապստամբների պարենային վիճակը ծանրանում է, Հեղկոմը բարեհոգություն է ցուցաբերում դեպի դասակարգային թշնամին, ցանկանում է կոնֆլիկտն անարյուն վերջացնել, չի վոնդում դաշնակցական այն միջնորդներին, որոնք անկումայնություն սերմանելով նախապատրաստում էին ապստամբության ճնշումը։ Ապստամբների շրջանում նկատվող տատանումները և շփոթվածությունը զոտեպնդում և լկտիացնում են դաշնակցական պատժիչ զորքերի հրամանատար Սեպուհին։ Նա վերջնագրով պահանջում է, մինչև մայիսի 14-ի առավոտյան ժամը 6-ը, առանց դիմադրության հանձնել Ալեքսանդրապոլը և զրահագնացքը, խոստանալով՝ «երաշխավորել ապստամբների կյանքը»։ Նույնպիսի պահանջ է դնում նաև երևանյան դաշնակցական բյուրո-կառավարությունը։

Մայիսի 13-ին «Վարդան զորավար» զրահագնացքում տեղի է ունենում ՀՌՀԿ-ի ընդլայնված նիստ, որտեղ քննվում է ստեղծված կացությունը։ Զեկուցումով հանդես է գալիս Ս. Մուսայելյանը։ Ելույթ ունեցողներից միայն մեկը՝ Լ. Ղազարյանը հանդես է գալիս անձնատուր լինելու առաջարկով՝ պատճառաբանելով, թե ապստամբությունն արդեն տանուլ է տրված։ Մյուսները առա-

ջարկում են քաղաքն առանց կռվի չհանձնել, կազմակերպել զինված դիմադրություն, պաշտպանել քաղաքը և գործը պատվով հասցնել մինչև վերջ։ Նիստը Սեպուհի վերջնագիրը համարում է անընդունելի և առաջարկում է ՌՀԿ-ին շտապ կազմակերպել քաղաքի պաշտպանությունը։ Սակայն մեկ ժամ հետո ՌՀԿ-ի փակ նիստը որոշում է քաղաքն հանձնել առանց մարտի։ Այնուհետև ՀՌԿ-ն թողնում է ռազմի դաշտը և հեռանում զրահագնացքից։

Սեպուհի բանդան մայիսի 14-ին, ցերեկվա ժամը 12-ին մտնում է Ալեքսանդրապոլ։ Սկսվում են ձերբակալություններն ու գնդակահարությունները։ Ձերբակալվում են մոտ 150 մարդ, այդ թվում Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը, Ե. Սևյանը և ուրիշներ։

Ալեքսանդրապոլի անկումը բախտորոշ նշանակություն ունեցավ ամբողջ երկրի ապստամբության համար։

Մայիսի 12-ին գեներալ Փիրումովի գլխավորությամբ Ղարսում ստեղծվում է այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտե», որն իր շուրջը համախմբելով հակահեղափոխական ուժերին, հարձակվում է Հեղկոմի վրա։ Ապստամբները մարտով նահանջում են դեպի Ալեքսանդրապոլ։ Մայիսի 14-ին նրանք հասնում են Արգինա գյուղը։ Դաշնակցականների հետապնդող բանդայի դեմ անհավասար կռվում քաջի մահով ընկնում են 9 հոգի, որոնց թվում նաև Ղ. Ղուկասյանը։

Թշնամու գերակշռող ուժերի ճնշման տակ ապստամբները, մայիսի 12-ին, Նոր Բայազետում նույնպես պարտվում են։ Հերոսի մահով ընկնում են Բ. Մինասյանը, Գ. Դադիկյանը, կապիտան Պետրովը, Ա. Նալբանդյանը, Փ. Տեր-Միքայելյանը, Ս. Վարդանյանը, Ղ. Հովեյանը և ուրիշներ։ Դաշնակները գնդակահարում են Բ. Բատիկյանին և Հ. Սարուխանյանին։

Դաշնակները ձեռնամուխ են լինում ապստամբությունը Քավթառլուում խեղդելու գործին և մայիսի 14-ի առավոտյան անցնում են հարձակման։ Կեսօրին Քավթառլուն շրջապատվում է և, չնայած բոլշևիկների հերոսական դիմադրությանը, գյուղը պահելն անհնարին է լինում։ Ա. Փանյանը, Կուրղինյանը և մի քանի ընկերներ բանտարկվում են։ Ա. Փանյանը, չնայած հիվանդ էր տիֆով, բոլշևիկին հատուկ արիությամբ մինչև իր հերոսական կյանքի վերջը արժանապատվությամբ պահեց իրեն։ Նրան, իր մարտական ընկերների՝ Ե. Սևյանի և Պրիբիլսկու հետ միասին, դաշնակները գազանաբար գնդակահարեցին հունիսի 4-ին։

Մայիսի 20-ին, ճնշելով ապստամբությունը Սարիղամիշում, դաշնակները գազանաբար տանջամահ են անում նրա ղեկավարներին՝ Ա. Ճուղուրյանին, Պ. Կուխմալյակինին, Ս. Ոսկանյանին, Պ. Մատիչկոյին։

Դիլիջանի գավառում խորհրդային իշխանության տապալումից հետո ռազմա-հեղափոխական կոմիտեի զինված ուժերը տեղափոխվում են Ադրբեջան։ Հետագայում, Բաքվում՝ 11-րդ բանակին կից, նրանցից կազմակերպվում է առանձին հայկական գունդ, որը դառնում է ապագա հայկական կարմիր բանակի հիմնական կորիզը։

Դաշնակցական կառավարությունը դաժան հաշվեհարդար տեսավ Մայիսյան ապստամբության մասնակիցների նկատմամբ։ Ձերբակալելու և տեղն ու տեղը շատ բոլշևիկների հետ դատաստան տեսնելու հետ մեկտեղ, դաշնակցականները Հայաստանի մի շարք գավառներում ստեղծեցին արտակարգ դատարաններ՝ անսահմանափակ իրավունքներով՝ ընդհուպ մինչև գնդակահա-

բության և հարյուր մեկ տարվա բանտարկության վճիռներ կայացնելը։ Նրանք ապստամբությունը խեղդեցին արյան մեջ։ Հեղափոխության անվախ հերոսները մինչև իրենց հերոսական կյանքի վերջը հավատարիմ մնացին ժողովրդի գործին։ Նրանց դատը ոչ մի կապ չուներ արդարադատության հետ, այն արտանոտ հաշվեհարդար էր։

Օգոստոսի 14-ին դաշնակցականները Ստ. Այավերդյանին, Ս. Մուսայելյանին, Բ. Ղարիբջանյանին, այլ վայր տեղափոխելու պատրվակով, հանում են Երևանի բանտից և նենգաբար գնդակահարում Նորքի ձորում։ Դաշնակ գահիճները իրենց դասակարգային անասնական ատելությանը հագուրդ տալու և հանցանքի հետքերը քողարկելու նպատակով նրանց դիակներն այրեցին և ածխացած ոսկորները թաքցրին քարերի տակ։ Միայն 1921 թ. հունիսին հայտնի դարձան նրեք հերոսների սպանության վայրը և շիրիմների տեղը։ Կուսակցության և կառավարության որոշմամբ նույն թվականին նրանց աճյունները անդափոխեցին և հունիսի 12-ին թաղվեցին Երևանի Կոմունարների այգում։

Հերոսական Մայիսյան զինված ապստամբությունը հայ ժողովրդի սխրագործ պատմության պանծալի էջերից է։ Այդ համաժողովրդական հեղափոխական շարժումը հսկայական դեր խաղաց խորհրդային իշխանության համար Հայ ժողովրդի պայքարում։

Մայիսյան ապստամբության հերոսների հիշատակը թանկ է կոմունիստական կուսակցության և սովետական ժողովրդի համար։ Ինչպես իրավացիորեն նշել է Ալ. Մյասնիկյանը՝ 1921 թ. Մայիսյան ապստամբության առաջին տարեդարձի առթիվ, Երևանում տեղի ունեցած հանդիսավոր նիստում. «Խորհրդային իշխանության սկիզբը անցյալ տարվա Մայիսյան ապստամբությունն է։ Դեռ այն ժամանակ կարող էինք ասել, որ խորհրդային իշխանության հաղթանակն ապահովված է, քանի կա աշխատավորություն, որի վրա խորհրդային իշխանությունը կարող էր հենվել երկու ոտքով... Այսօր մենք ծունկ չոքենք Ալեքսանդրապոլի հերոսների առաջ, նրանք արին այն, ինչ որ պիտի անեին։ Դասեր պիտի առնենք Ալեքսանդրապոլի ապստամբությունից։ Ամենակարևոր դասը գա այն գիտակցությունն է, որ Հայաստանի աշխատավորության համար չկա փրկություն առանց խորհրդային իշխանության»։

Այսօր մենք խորին հարգանքով պետք է հիշենք Լենինի կուսակցության և հայ ժողովրդի գոյատևման մեծ գործի համար անձնազոհ մարտնչած հերոսներին, որոնք գնդակահարությունից առաջ անվեհերորեն բացականչեցին. «Կճռճվենք կախաղանի վրա, բայց հեղափոխությանը չենք դավաճանի» (Հ. Սարուխանյան), «Բոլշևիկները մահից երբեք չեն վախենում... Մենք ձեր ձեռքով ոչ թե մահանում ենք, այլ անմահանում» (Բ. Հարությունյան), «Ոչինչ, մենք կմեռնենք, բայց այն գործը, որի համար մենք մեռնում ենք՝ շուտով կհաղթանակի» (Ե. Սևյան), «Ես մահից վախեցող չեմ, սպանեցե՛ք ինձ հենց այստեղ, բայց դուք չեք կարող խափանել անխուսափելին՝ այն, որ մեր գործը չի մեռնի» (Ս. Մուսայելյան), «Լավ հիշեցե՛ք, հեղափոխության գործը չի մեռնի։ Կեցցե՛ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը...» (Ստ. Ալավերդյան), «Հայաստանի հողը մեր արյունով կներկվի և կդառնա կարմիր։ Մի մոռանաք իմ խոսքերը՝ Հայաստանը խորհրդային կդառնա» (Բ. Ղարիբջանյան)։

Հայ ժողովրդի լավագույն զավակների կարմիր արյամբ ներկված հողում 1920 թ. նոյեմբերի 29-ին, ժողովրդի կամքով, հաղթանակեց խորհրդային իշխանությունը։

*Հայ ժողովուրդն ազատագրվեց դարավոր ողբերգությունից, անցյալի մղձավանջից։*

*Կրկնակի շքանշանակիր Սովետական Հայաստանի աշխատավորությունը, քաղաքական և աշխատանքային աննախընթաց խանդավառության պայմաններում Մայիսյան ապստամբության 50-ամյակին իր հարգանքի ու երախտագիտության տուրքն է տալիս Հայաստանի ազատության համար զոհված հերոսներին, հավերժացնում նրանց փառապանծ հիշատակը։*

## 50-ЛЕТИЕ МАЙСКОГО ВОССТАНИЯ

В. О. КАЗАНЧЯН

**Резюме**

50 лет тому назад трудящиеся Армении, воодушевленные всемирно-историческими победами Советской России, под руководством коммунистов, начали вооруженное восстание с целью свержения буржуазно-националистического правительства дашнаков.

Майские демонстрации 1920 года в Ереване, Александрополе, Карсе, Сарикамыше и в других районах Армении прошли под большевистскими лозунгами. Дашнакские главари с помощью внутренней реакции и иностранных империалистов потопили в крови героическое Майское восстание.

Несмотря на временное поражение, героическое Майское восстание сыграло огромную роль в освободительной борьбе армянского народа, в деле установления Советской власти в стране—в ноябре 1920 года.